ՄԵԼՔՈՆՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀԱՐՑԸ

Երեկ պարզվեց, որ Կիպրոսի իշխանությունները ավելի նախանձախնդիր են իրենց երկրում նշանավոր Մելքոնյան կրթական հաստատության պահպանման հարցում, քան Հայ բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ): Այս կապակցությամբ Կիպրոսի ներկայացուցիչների պալատի նախագահ ԴԵՄԻՏՐԻՈՍ ՔՐԻՍՏՈՖԻԱՍԸ նշեց հետեւյալը. «Ինչպես Կիպրոսի կառավարությունը, այնպես էլ խորհրդարանն ու հայ համայնքի ներկայացուցիչները շատ մեծ պայքար են մղում այդ վարժարանի գործունեությունը շարունակելու համար: Արվում է ինչ հնարավոր է, պայքարը շարունակվում է եւ դեռ ավարտված չէ: Մելքոնյան վարժարանը հայերի կենտրոնն է Կիպրոսում, ինչպեսեւ մեր մշակույթի մի մասը: Հենց այդ պատճառով էլ ցանկանում ենք այն ամեն կերպ պահպանել: Բայց, ցավոք, այն մարդիկ, ովքեր պետք է որոշեն, դրական որոշում դեռ չեն կայացրել: Դեռ հաջողության չենք հասել, բայց կշարունակենք մեր պայքարը»:

Հայոց Աշխարհ
20.10.04
www.hayashkharh.am